Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2019թ. հունիսի 13-ի
N 1-06/19/2 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝
Հ. Վ. Թորմաջյան

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
# ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման կանոնակարգը սահմանում է Համալսարանի արտաքին շահակիցների շրջանում հարցումների անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

1.2 Հարցումը կրթական ծրագրերի որակի ապահովման կարևորագույն բաղադրիչ է, որի անցկացման նպատակն է ստանալ տեղեկատվություն Համալսարանի շրջանավարտների մասնագիտական և անձնային կոմպետենցիաների, ընդհանրական կարողությունների և աշխատաշուկայում Համալսարանի շրջանավարտների մրցունակության վերաբերյալ:

## 2. ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2.1 Հարցումն անց է կացվում տարածաշրջանի գործատու կազմակերպությունների (ուսումնական հաստատությունների, տարբեր հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների) շրջանում:

2.2 Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա փետրվար-մայիս ամիսներին:

2.3 Հարցումն անցկացվում է արտաքին կապերի, ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի կենտրոնի կողմից:

2.4 Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (Հավելված 1):

2.5 Հարցումն անանուն է և անց է կացվում թղթային եղանակով:

## 3. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

3.1 Հարցման արդյունքները մշակվում, վերլուծվում և պահպանվում են արտաքին կապերի, ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի կենտրոնում:

3.2 Հարցման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր հարցի պատասխանի համար ստացած գնահատականի միջին թվաբանականով և ստացված յուրաքանչյուր գնահատականի քանակով:

3.3 Հարցաթերթն ունի առաջարկության բաժին, որի արդյունքը մշակվում և ներկայացվում է ուսումնառության բարելավմանը միտված ընդհանրացված առաջարկությունների տեսքով:

3.4 Հարցման արդյունքների մշակումն ու վերլուծությունը կատարվում է մեկամյա ժամկետում և պահմանվում հինգ տարի:

## 4.ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

4.1 Հարցման արդյունքների վերլուծությունները [illegible] ակերի, ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի կենտրոնի ղեկավարը քննարկում է Որակի կառավարման հանձնաժողովի, ուսումնամեթոդական բաժնի, որակի ապահովման բաժնի հետ:

4.2 Ուսումնամեթոդական բաժնի հարցման արդյունքների վերլուծությունների հիման վրա ֆակուլտետների դեկանների, ամբիոնի վարիչների հետ քննարկվում և մշակվում է ուսումնառության գործընթացի և կրթական վերջնարդյունքների ձևավորմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

4.3 Ֆակուլտետների դեկանները մեկամսյա ժամկետում առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակում են ֆակուլտետում բարելավման գործողություններ ու ներկայացնում ֆակուլտետի խորհրդի հաստատմանը, որտեղ նշվում են դրանց իրականացման ժամկետները և պատասխանատուները:

4.4 Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Համալսարանի կայք էջում:

## 5. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

5.1 Սույն կանոնակարգը հաստատվում, դրանում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Հ.Վ.Թոքմաջյան

Գիտական քարտուղար՝ Ա.Ա.Առաքելյան

Հավելված 1

## ՇՏՀ-ի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության
## ՀԱՐՑԱԹԵՐԹ

Գնահատումը կատարվում է 5 բալային սանդղակով, որտեղ՝ 5-ը ամենաբարձր գնահատականն է, 4-ը՝ լավ, 3-ը՝ բավարար, 2-ը՝ անբավարար, պատասխան չունենալու դեպքում ՝ 0

Կրթական ծրագրի անվանումը______________________________

Որակավորման աստիճանը______________________________

Կազմակերպության անվանումը______________________________

| | | |
|---|---|---|
| 1 | Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի մասնագիտական պատրաստվածությունից՝ | |
| | տեսական գիտելիքների իմացություն | **2 3 4 5 0** |
| | գործնական հմտություններ | **2 3 4 5 0** |
| | հաղորդակցվելու կարողություն | **2 3 4 5 0** |
| | քննադատական-վերլուծական կարողություն | **2 3 4 5 0** |
| | մասնագիտական խոսք | **2 3 4 5 0** |
| 2 | Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի համակարգչային տեխնիկայի և կիրառական ծրագրերի անհրաժեշտ իմացությունից | |
| | **2 3 4 5 0** | |
| 3 | Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի մասնագիտական օտար լեզուների իմացությունից | |
| | **2 3 4 5 0** | |
| 4 | Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի գործընկերների հետ համագործակցության և թիմային աշխատանքից | |
| | **2 3 4 5 0** | |
| 5 | Ինչքանո՞վ եք բավարարված շրջանավարտի էթիկայի նորմերին հետևելուն | |
| | **2 3 4 5 0** | |
| 6 | Ինչքանո՞վ են ՇՏՀ շրջանավարտի մասնագիտական գիտելիքները մրցունակ աշխատաշուկայում | |

| | 23450 |
|---|---|
| 7 | Ի՞նչ փոփոխություններ կառաջարկեիք կատարել տվյալ կրթական ծրագրում մասնագիտական պատրաստվածության բարձրացման ուղղությամբ: |
| | |